ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի III գումարման VIII նստաշրջանի արդյունքների մասին
(11.09.06թ. - 07.12.06թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երրորդ գումարման ութերորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 քառօրյա և 3 արտահերթ նիստ՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ: Նստաշրջանի ավարտից հետո գումարվել է 1 արտահերթ նստաշրջան (20.12.06թ.)՝ դարձյալ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ::

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 85 հարց, որից 45-ը ՀՀ Կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին, 32-ը՝ ԱԺ պատգամավորներինը, իսկ 8-ը՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պարտադիր քննարկվող հարցեր: Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 55 օրենքների նախագծերով, որից 39-ը՝ ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին, 16-ը՝ ԱԺ պատգամավորներինը:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորների հեղինակած 2 նախագծեր քննարկվեցին որպես այլընտրանքային: Դրանք են՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքների նախագծերը:

ՀՀ Կառավարության ներկայացրած 84 նախագծերից 22-ը ՀՀ Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարված օրինագծեր էին:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 140 հարցերից 132-ը օրենքների նախագծեր էին, որոնցից աշնանային և արտահերթ նստաշրջանների ընթացքում քննարկվել են 91-ը: Դրանցից 10-ը ընդունվել են առաջին ընթերցմամբ (4-ը կառավարության նախաձեռնություններն էին, 6-ը՝ ԱԺ պատգամավորներինը), 59-ը՝ երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (55-ը՝ ՀՀ կառավարության, 4-ը ԱԺ պատգամավորների), 22-ը՝ երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (բոլորն էլ ՀՀ Կառավարության նախաձեռնություններն էին):

ԱԺ-ը քվեարկության արդյունքներով մերժեց 4 օրենքների նախագծերի և 3 օրենքների նախագծերի փաթեթների ընդունումը: Դրանք են՝

1. ա) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին»,

բ) «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»,

գ) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին».

2. ա) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,

բ) «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»,

գ) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին».

3. «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին».

4. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին».

5. «Դեղերի մասին».

6. ա) «Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»,

բ) «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»,

գ) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին».

7. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»:

Նշված նախագծերից 6-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին, 1-ը՝ ԱԺ պատգամավորներինը («Դեղերի մասին» ՀՀ օրենքի նախագիծ):

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը և «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից կրկին դրվեցին շրջանառության մեջ և նստաշրջանի ընթացքում ընդունվեցին որպես օրենք:

ՀՀ կառավարության նախաձեռնած 2 օրենքների նախագծերի փաթեթներ միացվեցին («Տրանսպորտային տեսչություն» և «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին») և քննարկվեցին որպես մեկ փաթեթ:

Շրջանառությունից հանվեցին ՀՀ Կառավարության 2 օրենսդրական նախաձեռնություններ՝ քննարկման անհրաժեշտությունը վերանալու և ԱԺ-ի որոշման 1 նախագիծ՝ պատգամավորի կողմից հետ կանչման պատճառներով:

Ամբողջությամբ ընդունված 81 օրենքներից 77-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 4-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը:

Ընդունված 81 օրենքներից 22-ը մայր օրենքներ էին (22-ն էլ ՀՀ կառավարության նախաձեռնությունները), իսկ 59-ը՝ գործող օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (55-ը՝ ՀՀ կառավարության, 4-ը՝ ԱԺ-ի պատգամավորների):

Ամբողջությամբ ընդունված 81 օրենքներից 28-ը ունեն ֆինանսատնտեսական ուղղվածություն, 14-ը՝ սոցիալական, բնապահպանական և առողջապահական նշանակություն, 31-ը՝ իրավական դաշտից են, իսկ 8-ը՝ երկրի պաշտպանության և ազգային անվտանգության:

Նախորդ նստաշրջանի ընթացքում քննարկված, սակայն անավարտ մնացած 10 օրենքների նախագծերից 2-ը ամբողջությամբ ընդունվեցին (ՀՀ Կառավարության), 1-ի ընդունումը II-րդ ընթերցմամբ մերժվեց ԱԺ-ի կողմից (ԱԺ պատգամավորների) իսկ մնացած 7-ը այդպես էլ չքննարկվեցին՝ ամբողջությամբ ընդունելու համար (1-ը՝ ՀՀ Կառավարության, 6-ը՝ ԱԺ պատգամավորների):

Ազգային ժողովը՝

ա) լսեց

1. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007թ. գործունեության ծրագիրը,
2. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2007թ. գործունեության ծրագիրը,
3. ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության 2007թ. տարեկան ծրագիրը.

բ) քվեարկությամբ հաստատեց՝

1. Պետական գույքի մասնավորեցման 2001-2003թթ. թվականների ծրագրի կատարման 2005թ. տարեկան հաշվետվությունը,
2. ԱԺ-ի վերահսկիչ պալատի 2005թ. տարեկան հաշվետվությունը.
3. ԱԺ-ի վերահսկիչ պալատի 2007թ. գործունեության ծրագիրը,
4. ՀՀ 2007-2009 թթ. պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը.

գ) 29.11.2007թ ընդունեց «Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 18 միջազգային պայմանագրեր և ևս 5-ը՝ արտահերթ նստաշրջանի ընթացքում, որոնցից 4-ը տնտեսական բնագավառում համագործակցության մասին է, 2-ը՝ պաշտպանական, 8-ը՝ իրավական, 6-ը՝ սոցիալական, 2-ը՝ ֆինանսական և այլն:

Նստաշրջանի ընթացքում 14 պատգամավոր գրավոր և 69 պատգամավոր բանավոր հարցերով դիմել է ՀՀ կառավարությանը: 110 պատգամավոր հանդես է եկել հայտարարությամբ, որոնցից 22-ը վերաբերել են կառավարության գործունեությանը: